

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ  
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ**

<p><b>1 Ընդհանուր դրույթներ</b></p> <p><b>1.1 Պաշտոնի անվանումը, ծածկագիրը</b> Հայաստանի Հանրապետության Լոռու Մարզպետարանի (այսուհետ՝ Մարզպետարան) գյուղատնտեսության և բնապահպանության վարչության (այսուհետ՝ Վարչություն) գյուղատնտեսության բաժնի (այսուհետ՝ Բաժնի) գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 95-1.3-Մ2-2)</p> <p><b>1.2.Ենթակա եւ հաշվետու է</b> Բաժնի գլխավոր մասնագետը ենթակա եւ հաշվետու է Բաժնի պետին:</p> <p><b>1.3.Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները</b> Գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի պետը:</p> <p><b>1.4.Աշխատավայրը</b> Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ, ք. Վանաձոր, Հայքի հրապարակ 1</p>
<p><b>2. Պաշտոնի բնութագիրը</b></p> <p><b>2.1 Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները</b></p> <p>1) Իրականացնում է մարզի տարածքում սննդամթերքի անվտանգության և անասնաբուժական ծառայությունների հետ համագործակցության, կենդանիների հակահամաճարակային միջոցառումների, վարակիչ և զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների, թունավորումների կանխարգելման ու վերացման աշխատանքներ</p> <p>2) Իրականացնում է մարզի համայնքներում անասնազխաքանակի համատարած հաշվառման աշխատանքները</p> <p>3) Իրականացնում է համագործակցություն և աջակցում է մարզի տոհմաբուժական տնտեսություններին և անասնաբուժական սպասարկման կենտրոններին</p> <p>4) Իրականացնում է մարզի սոցիալ-տնտեսական զարգացման նպատակով գյուղատնտեսության ոլորտի ծրագրերի և հայեցակարգերի մշակման և կազմման աշխատանքներ</p> <p>5) Իրականացնում է համագործակցություն և աջակցում է համայնքներում գյուղատնտեսության ոլորտում ծրագրեր իրականացնող՝ պետական, հասարակական, մասնավոր ներդրող և արտասահմանյան դոնոր կազմակերպություններին</p> <p>6) Իրականացնում է համագործակցություն և աջակցում է մարզի գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններին, գյուղատնտեսական արտադրանք վերամշակող կազմակերպություններին և ագրարային ոլորտի տնտեսվարող այլ սուբյեկտներին</p> <p>7) Իրականացնում է՝ մարզպետարանի, համապատասխան գերատեսչական մարմինների մարզային ծառայությունների, հասարակական կազմակերպությունների, մարզի տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ և համաձայնեցված աշխատանքային գործունեություն</p> <p>8) Իրականացնում է մարզում անասնաբույժների և անասնաբուծության ոլորտի ֆերմերների մասնագիտական վերապատրաստման աշխատանքներ</p> <p>9) Նախապատրաստում է բաժնի առջև դրված գործառնություններից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, եզրակացություններ, դրանց վերաբերյալ մեթոդաբանական պարզաբանումներ, ինչպես նաև զեկուցագրեր,</p>

առաջարկներ, տեղեկանքներ, հաշվետվություններ և գրություններ

10) Մշակում է մարզում անասնաբուծության բնագավառում իրականացվող ծրագրերի վերաբերյալ տարեկան աշխատանքային պլան, մոնիտորինգի և մարզում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն, բաժնի գործառույթներից բխող և անասնաբուծության ոլորտին վերաբերյալ ծրագրեր

11) Իրականացնում է՝ քաղաքացիների, ագրարային ոլորտի մասնագետների և տնտեսվարողների ընդունելություն

12) Իրականացնում է՝ անասնաբուծության, անասնաբուժության, գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման և մարզում իրականացվող գյուղատնտեսական ծրագրերին վերաբերվող հարցերում քաղաքացիների կողմից ուղարկված դիմումների և բողոքների ուսումնասիրություններ

13) Իրականացնում է ուսումնասիրություններ մարզային վիճակագրական ծառայության համապատասխան մասնագետների հետ, մարզի անասնաբուժական մթերքների արտադրության ծավալների վերաբերյալ

14) Իրականացնում է ուսումնասիրություններ արտակարգ դեպքերի, բնական աղետների (սելաֆներ, հորդառատ անձրևներ, կայծակ, գայլերի հարձակում) հետևանքով համայնքների՝ անասնապահական տնտեսություններին և գյուղատնտեսական կենդանիներին հասցված վնասների և առաջացած խնդիրների վերաբերյալ

15) Համարվում է մարզի «Քաղաքացիական պաշտպանության բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայության» շտաբի անդամ և իրականացնում է քաղաքացիական պաշտպանության պլանով նախատեսված միջոցառումներ

#### **Իրավունքներ՝**

1) Համապատասխան գերատեսչությունից՝ հակահամաճարակային միջոցառումները վերահսկելու նպատակով ձեռք բերել միջոցառումների իրականացման պլան-ժամանակացույց, ինչպես նաև կենդանիների վարակիչ և զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների, թունավորումների բռնկման դեպքում՝ տեղեկատվություն ստանալ հիվանդությունների առաջացման պատճառների և օջախների վերաբերյալ:

2) Հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման նախարարի հանձնարարականը և Լոռու մարզպետի կարգադրությունը, առաջարկել համայնքի ղեկավարներին յուրաքանչյուր տարի, համայնքներում ստեղծել անասնազվխաքանակի հաշվառման հանձնաժողով և սահմանված ժամկետում կազմակերպել անասնազվխաքանակի հաշվառում

3) Տոհմաբուժական տնտեսությունների և անասնաբուժական սպասարկման կենտրոնների աշխատանքային գործունեության վերաբերյալ կատարել ուսումնասիրություններ և վերլուծություններ

4) Համապատասխան գերատեսչական մարմիններից, համայնքներից, ագրարային ոլորտի տնտեսվարողներից ձեռք բերել անհրաժեշտ նյութեր, տեղեկատվություններ և փաստաթղթեր

5) Ծրագրեր իրականացնող կազմակերպությունների հետ համատեղ կատարել ուսումնասիրություններ, վերլուծություններ և արդյունքների արձանագրում

6) Ուսումնասիրել և տեղեկատվություն հավաքագրել մարզի ագրարային ոլորտի տնտեսվարող սուբյեկտների արտադրական գործունեության վերաբերյալ

7) Ընդգրկվել՝ մարզպետարանի, համապատասխան գերատեսչական մարմինների մարզային ծառայությունների, հասարակական կազմակերպությունների, մարզի տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ կազմավորված և ուսումնասիրություններ իրականացնող հանձնաժողովների և աշխատանքային խմբերի կազմում,

8) Իրականացնել անասնաբույժների և անասնաբուծության բնագավառի ֆերմերների վերապատրաստման կարիքների բացահայտում,

9) Ուսումնասիրել իրավական ակտերի նախագծերի, զեկուցագրերի, տեղեկանքների, հաշվետվությունների, գրությունների և այլ կազմվող փաստաթղթերի իրավական հիմքերը

10) Համապատասխան գերատեսչական մարմիններից, տեղական ինքնակառավարման մարմիններից, ագրարային ոլորտի տնտեսվարողներից ստանալ անհրաժեշտ նյութեր, փաստաթղթեր՝ վերլուծել և ամփոփել

11) Հարցազրույցի վարում և խնդիրների վերհանում

12) Դիմումատի հետ քննարկումների կազմակերպում, դիմումում ներկայացված խնդիրների վերաբերյալ տեղեկատվություն ստանալ համապատասխան մարմիններից. կառույցներից և կազմակերպություններից

13) Ուսումնասիրություն իրականացնել մարզի անասնաբուժական տնտեսություններում և գյուղատնտեսական արտադրանք վերամշակող կազմակերպություններում՝ անասնաբուժական մթերքների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար

14) Այցելել համայնքներ, կատարել ուսումնասիրություններ բնական աղետների հետևանքների վերաբերյալ

15) Տեղեկատվություն ստանալ քաղաքացիական պաշտպանության պլանով նախատեսված գործառույթներն իրականացնող՝ գործող և պահեստային, անձնակազմի «պատրաստ վիճակի» վերաբերյալ:

#### **Պարտականությունները՝**

1) Բաժնի պետին ներկայացնել տեղեկատվություն՝ մարզում հակահամաճարակային միջոցառումների իրականացման, կենդանիների վարակիչ և զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների, թունավորումների բռնկման դեպքերի վերաբերյալ: Համարվելով մարզային «Գյուղատնտեսական կենդանիների կարանտինի սահմանման և չեղյալ հայտարարման» հակաանասնահամաճարակային հանձնաժողովի անդամ, մարզի տարածքում անասնահամաճարակի բռնկման դեպքում, ներկայացնել մասնագիտական եզրակացություն և հանձնաժողովի մյուս անդամների հետ համատեղ, ապահովել ՀՀ կառավարության և շահագրգիռ պետական կառավարման այլ մարմիններին կարանտինի սահմանման և չեղյալ հայտարարման անհապաղ տեղեկացումը

2) Համարվելով մարզային՝ «Գյուղատնտեսական կենդանիների համատարած հաշվառման» և «Համայնքներում իրականացվող գյուղատնտեսական կենդանիների ընտրանքային հաշվառման» հանձնաժողովի անդամ, անասնազխաքանակի հաշվառման վերաբերյալ ներկայացնել մասնագիտական եզրակացություն և հանձնաժողովի մյուս անդամների հետ համատեղ, հաստատել մարզային վիճակագրական ծառայության կողմից ներկայացված անասնազխաքանակի հաշվառման ամփոփ տեղեկանքը և ներկայացնել բաժնի պետին

3) Տոհմաբուժական տնտեսություններին՝ ներգրավել և ընդգրկել պետական ծրագրով արտերկրից ներկրված տոհմային կենդանիների ձեռք բերման գործընթացում, ինչպես նաև աջակցել տնտեսությունում բուծված կենդանիները՝ մարզի ֆերմերային տնտեսություններին տրամադրելու գործում: Անասնաբուժական սպասարկման կենտրոններին՝ աջակցել մարզի տարածքում գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման աշխատանքների ծավալը ընդլայնելու գործում

4) Մշակված հայեցակարգերը և ծրագրերը ներկայացնել ֆինանսավորող դոնոր կազմակերպություններին

5) Ընտրել ծրագրերի իրականացման վայրը և ծրագրեր իրականացնողներին տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություններ, նյութեր և մասնագիտական խորհրդատվություն

6) Ելնելով ուսումնասիրության արդյունքներից, տնտեսություններին՝ հիմնադրման, կազմակերպման և զարգացման գործում, ցուցաբերել մասնագիտական և խորհրդատվություն աջակցություն, ինչպես նաև կազմակերպություններին ներգրավել մարզում իրականացվող գյուղատնտեսական ծրագրերի գործընթացին

7) Մարզային հանձնաժողովի մյուս անդամների հետ համատեղ իրականացնել ուսումնասիրություններ, կատարված ուսումնասիրությունների վերաբերյալ տալ մասնագիտական եզրակացություն և կազմել արձանագրություն

8) Իրականացնել վերապատրաստման դասընթացներ մարզի գյուղատնտեսական ուղղվածություն ունեցող ուսումնական հաստատություններում և անասնաբույժներին ու ֆերմերներին ուղղորդել խոշոր տնտեսություններ փորձի փոխանակման

9) Կազմված իրավական ակտերի նախագծերը, զեկուցագրերը, տեղեկանքները, հաշվետվությունները, գրությունները և այլ փաստաթղթերը ներկայացնել բաժնի պետին

10) Բաժնի պետին ներկայացնել՝ մարզում անասնաբուժության բնագավառում իրականացվող ծրագրերի վերաբերյալ տարեկան աշխատանքային պլանը, մոնիտորինգի և մարզում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը, ինչպես նաև բաժնի գործառույթներից բխող ծրագրեր

- 11) Քաղաքացուն տրամադրում է խորհրդատվություն և մասնագիտական աջակցություն
- 12) Դիմումների և բողոքների ուսումնասիրության արդյունքում արձանագրված տեղեկատվությունը վերլուծել, ամփոփել և ներկայացնել բաժնի պետին
- 13) Վիճակագրական տվյալների արձանագրում, վերլուծում, ամփոփում
- 14) Բնական աղետների հետևանքների ուսումնասիրության վերլուծում, ամփոփում և արձանագրում
- 15) Մարզում գյուղատնտեսական կենդանիների և մշակաբույսերի, գյուղատնտեսական և ոռոգման նպատակներով օգտագործվող ջրային աղբյուրների և ջրամատակարարման ցանցերի պաշտպանության, անասնափակահամաճարակային միջոցառումների կարանտինային սահմանափակումների կազմակերպման վերաբերյալ ուսումնասիրության վերլուծում, ամփոփում, արձանագրում և ներկայացում շտաբի պետին

**3. Պաշտոնին ներկայացվող պահանջները**

**3.1 Կրթության, որակավորման աստիճանը**

Բարձրագույն կրթություն

**3.2 Մասնագիտական գիտելիքները**

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

**3.3 Աշխատանքային ստաժը եւ (կամ) աշխատանքի բնագավառում փորձը**

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ գյուղատնտեսության բնագավառում ` չորս տարվա աշխատանքային ստաժ

**3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ**

Ընդհանրական կոմպետենցիաներ

- ծրագրի մշակում
- խնդրի լուծում
- հաշվետվությունների մշակում
- տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
- բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ

- կոնֆլիկտների կառավարում
- ժամանակի կառավարում
- փաստաթղթերի նախապատրաստում
- փոփոխությունների կառավարում
- բանակցությունների վարում
- բողոքների բավարարում

**4. Կազմակերպական շրջանակ**

**4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը**

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

**4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները**

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման կամ դիմումների քննարկման արդյունքում որոշումների նախապատրաստման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

**4.3. Գործունեության ազդեցությունը**

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման համար մասնագիտական

գործունեության տարածքային ազդեցություն:

**4.4. Շփումները և ներկայացուցչությունը**

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

**4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը**

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը:

ՀՀ ԼՈՒՌԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ  
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

12/27/19



ԱՐԹՈՒՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ